

ԿԱՐԾԻՔ

Աստղիկ Գևորգի Պողոսյանի «Ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրները ՀՀ բուհերում» թեմայով, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Ֆինանսական վերահսկողությունն իր առջև խնդիր է դնում ոչ միայն գնահատելու հանրային ֆինանսավորման նպատակային ծախսերը բուհերում, այլև դրանց արդյունավետ օգտագործման արդյունքների ներկայացումը բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների շահառուներին՝ պետությանը, բուհերի վարչակազմին, ուսանողությանը և գործատուներին: Մասնավորապես, կրթական շուկայում բուհերը մրցակցային են համարվում հիմնավոր ուսանողական կրթավճարների սահմանումով: Սակայն, հատկապես ՀՀ բուհերում դեռևս հստակ չի ներկայացվում, թե ինչի հիման վրա են սահմանվում ուսանողական վարձերը: Ֆինանսական վերահսկողության տեսանկյունից տվյալ հիմնախնդրի լուծումը չափազանց կարևոր է, քանի որ ուռճացված կրթավճարները, կամ դրանց արժեքային իջեցված սահմանումները, լուրջ վնաս կարող են հասցնել բուհի ֆինանսական պաշարների ձևավորման կայունությանը:

Համալսարանական գործունեության ֆինանսական վերահսկողության ոլորտում վերանայումների կարիք է զգացվում ակադեմիական կրեդիտների կուտակման և հատկապես դրանց փոխանցումներից բխող ֆինանսատնտեսական գնահատումների ոլորտը: Ներկայումս անհրաժեշտություն է զգացվում ֆինանսական վերահսկողության հարթակ տեղափոխելու ակադեմիական կրեդիտների փոխանցելիությունը, քանի որ յուրաքանչյուր կրեդիտին վերագրվում է ոչ միայն ուսումնառության ծանրաբեռնվածություն, այլև ֆինանսական բաղադրամաս: Հետևաբար, ակադեմիական կրեդիտների շարժը փոփոխություններ է առաջացնում բուհի ֆինանսական ներհոսքերում և արտահոսքերում, որն էլ իր հերթին պահանջում է ակադեմիական

կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացի դիտարկում ֆինանսական վերահսկողության կտրվածքով, երբ մասնագիտական կրթական ծրագրերը ենթարկվում են ֆինանսական մշտադիտարկման՝ համալսարանի կողմից ընդունած և այլ բուհեր փոխանցած ակադեմիական կրեդիտների տեսանկյունից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կազմակերպություններում ֆինանսական վերահսկողությունն արդյունավետ է օգտագործվում հատկապես այն դեպքում, երբ իրականացվում է ըստ պատասխանատվության կենտրոնների բյուջետավորում: Սակայն, դրան զուգահեռ, պետք է արձանագրել, որ ՀՀ բուհերում բյուջետավորումն իրականացվում է «կաթսայական եղանակով», այսինքն ծախսային և եկամտային նախահաշիվները սահմանվում են համաբուհական կտրվածքով և չեն ներկայացվում ըստ առանձին պատասխանատու գիտակրթական գործունեություն ծավալող ստորաբաժանումների: Դա էլ իր հերթին իջեցնում է ֆինանսական հաշվետվողականության արդյունավետության աստիճանը, ինչպես նաև բուհերում վերահսկողության համար անբարենպաստ շեղումների արձանագրման, բացահայտման և կանխարգելման խոչընդոտներ ստեղծում՝ ըստ պատասխանատվության կենտրոնների: Ուստի, արդիական է համարվում պատասխանատվության կենտրոններով ֆինանսական վերահսկողության կազմակերպումը բուհերում ու, դրան զուգահեռ, ֆինանսական նախահաշիվների հաշվետվողականության արդյունավետ համակարգի ներդրումը:

Վերոնշյալ հիմնախնդիրները վկայում են հետազոտության թեմայի խիստ կարևորության և արդիականության մասին:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը, արժանիքները, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը

Ատենախոսությունում հեղինակը նպատակ է դրել ներկայացնել առաջարկություններ ՀՀ բուհերում ֆինանսական վերահսկողության բարելավման ուղղություններով:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել համալսարանների ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձը և ներկայացնել ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման հնարավորությունները,
- բուհերի ֆինանսավորման աղբյուրների շրջանակն որոշելիս հաշվի առնել ինչպես համալսարանական գործունեության հանրային և մասնավոր շահառուների սպասումները, այնպես էլ կրթական ծառայությունների մատուցման շուկայում ձևավորվող առաջարկի և պահանջարկի հավասարակշիռ վիճակը,
- ներկայացնել կրթավճարների ձևավորման վերահսկողության մոտեցում՝ հիմնված դիմորդի ֆինանսական սպասումների վրա,
- ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկել ֆինանսական վերահսկողության տեսանկյունից՝ առաջարկելով կրեդիտների շարժունության դրամային փոխակերպման համակարգ,
- անընդհատության սկզբունքով ներկայացնել ներբուհական ֆինանսական հաշվետվողականության կազմակերպում՝ նպատակ ունենալով կանխարգելելու բուհի ֆինանսական ռիսկերի ձևավորումն՝ ըստ գիտակրթական գործունեության պատասխանատվության կենտրոնների:

Ատենախոսությունն ունի գիտագործնական ուղղվածություն: Ատենախոսության կառուցվածքը տրամաբանական հաջորդականությամբ տալիս է բարձրացված հարցերի տնտեսագիտական լուծումները: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ըստ բաժինների, աշխատանքում ներկայացվել են.

Ներածությունում ներկայացվել են հետազոտության թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական արդյունքներն ու նորույթը, արդյունքների գործնական նշանակությունը, փորձարկումն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին «Ֆինանսական համակարգի գործունեության համալսարաններում առանձնահատկությունները» գլխում քննարկվում են ՀՀ բուհերի

գործունեության ֆինանսավորման շրջանակը: Հանրապետությունում ձևավորվել է մի իրավիճակ, երբ պետությունը բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման հիմնական բեռը թողնում է մասնավոր ոլորտի վրա, որն էլ բուհերի ֆինանսական վիճակը կախվածության մեջ է դնում ուսանողական կրթավճարներից: Գնահատելով ՀՀ պետական բուհերի գործունեության ֆինանսական կառուցվածքը արձանագրվում է այն փաստը, որ պետական ֆինանսավորումը իր տեսակարար կշռով երկրորդ տեղում է (23%), առաջին տեղը զիջելով ուսանողական կրթավճարներին:

Ատենախոսության երկրորդ «Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերահսկողության շրջանակը» գլխում վերլուծվում է կրթավճարների ձևավորման ֆինանսական վերահսկողության մոտեցումները:

Ֆինանսական վերահսկողության վերլուծական գործառույթում կարևորվում է կրթավճարների հիմնավորումը՝ շրջանավարտների եկամտային սպասումների տեսանկյունից: Դեռևս բուհ ընդունելության մեկնարկին, որպես դիմորդ, շրջանավարտը կամա թե ակամա կարող է կրթավճարների տնտեսական հիմնավորվածության գնահատումներ իրականացնել և որոշում կայացնել կոնկրետ համալսարանին դիմելու ֆինանսական նպատակահարմարության վերաբերյալ:

Նշվում է, որ յուրաքանչյուր տարի կատարելով կրթավճարներ, անհատը կարող է այն դիտարկել որպես «կորցրած ֆինանսական եկամուտներ», եթե այդ ընթացքում չսովորեր բուհում և այդ գումարները պարզապես ավանդագրեր բանկում: Մյուս կողմից, նման գնահատումներին հակադարձվում են նաև ապագա շրջանավարտ մասնագետի տարեկան եկամտային սպասումները աշխատանքի անցնելուց հետո: Հետևաբար, որպես համալսարանում սովորած տարիների «կորցրած եկամուտների» և «հետբուհական աշխատանքային եկամտային սպասումների» համարժեքություն: կարող է ներկայացվել ֆինանսապես հավասարակշռված կրթավճարների ձևավորման կետը.

Ատենախոսության երրորդ «Ֆինանսական վերահսկողության կատարելագործման ուղիները բուհերում» գլխում քննարկվում է ըստ պատասխանատվության կենտրոնների վերահսկողության մեխանիզմների ներդրման շրջանակը:

պատասխանատվության կենտրոններով ֆինանսական վերահսկողություն կազմակերպելիս առաջնահերթորեն կատարվում է բուհում նախատեսվող ծախսերի և ակնկալվող եկամուտների բյուջետավորում՝ ըստ ծախսերի ձևավորման և ֆինանսական արդյունքների ստացման կենտրոնների: Ընդ որում, առաջին խմբում հանդես են գալիս մասնագիտություններ թողարկող ամբիոնները, հետազոտության արդյունքներ վաճառահանող գիտահետազոտական ստորաբաժանումները, իսկ երկրորդ խմբով՝ սպասարկող ամբիոնները, վարչատնտեսական ստորաբաժանումները, կրթական ծառայությունները սպասարկող օժանդակ օղակները:

Եզրակացություններ բաժնում ընդհանրացվել են ատենախոսության արդյունքները և կատարված առաջարկությունները:

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել հանրարդյունաբերությունում վարվող հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, մակրոտնտեսական վերլուծությունները: Ատենախոսությունում օգտագործվել են բարձրագույն կրթության ծառայությունների ոլորտի զարգացմանը վերաբերող հաշվետվական տվյալներ, ՀՀ վիճակագրական և ուսումնասիրման բնագավառին առնչվող այլ նյութեր:

Հետազոտության մեջ կիրառվել են գիտական արստրակցիայի, ֆինանսատնտեսական, գործոնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ, ինչպես նաև փորձագիտական ուսումնասիրությունների եղանակներ:

Գրախոսվող ատենախոսության կարևոր առավելություններից մեկն էլ այն է, որ ստացված արդյունքները չեն կրկնում այլ հետազոտողների կողմից կատարած արդյունքները և անկասկած պարունակում են գիտական նորույթ, որն արտահայտվում է հետևյալ դրույթներում՝

ա/ հիմնավորվել է ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացումը՝ ներդաշնակություն սահմանելով բուհերի կայուն ֆինանսական գործունեությանն առնչվող հանրային և մասնավոր շահառուների սպասումների, ինչպես նաև կրթական ծառայությունների մատուցման շուկայում ձևավորվող առաջարկի և պահանջարկի միջև,

բ/ դիմորդի ֆինանսական սպասումների հենքով մշակվել է կրթավճարների ձևավորման գործընթացի վերահսկողության մոտեցում, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ուսման վարձերի փոփոխության պատճառահետևանքային կապերը՝ ըստ ներքին և արտաքին միջավայրային ազդակների ազդեցությունների,

գ/ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկելով ֆինանսական վերահսկողության կտրվածքով, առաջարկվել է կրեդիտների արժեքային փոխակերպման համակարգ՝ ուսանող/ակադեմիական հենքով ներկայացնելով հաշվարկային դրամական ներհոսքեր և արտահոսքեր,

դ/ առաջարկվել է ըստ պատասխանատվության կենտրոնների գիտակրթական գործունեության անբարենպաստ դրամական շեղումների բացահայտման հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգ, հնարավորություն ստեղծվելով բուհերում իրականացնելու ներկատարչական հաշվետվողականության կազմակերպում:

Հետազոտության մեկ այլ առավելությունն էլ այն է, որ ստացված արդյունքներն ունեն գործնական նշանակություն՝ դրանք հանգեցվել են կոնկրետ առաջարկությունների և եզրակացությունների, հետևաբար աշխատանքում մշակված մոտեցումները, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն տեսական և գործնական նշանակություն:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսական այս աշխատանքում դրականին առընթեր, կան նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Աշխատանքում ներկայացված են գծապատկերներ, որոնք թերևս լրացուցիչ մեկնաբանումների կարիք ունեն: Մասնավորապես, գծապատկեր 1.2.1-ը վերլուծվում է զուտ տեսական մոտեցումներով: Սակայն, կարծում ենք, որ ատենախոսությունում այն պետք է զարգացվեր և մեկնաբանվեր փաստացի տվյալներով, որն առավել համոզիչ կդրաձներ ատենախոսի եզրահանգումները

ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական շուկայի հավասարակշիռ վիճակը գնահատելիս: Նույնը վերաբերում է գծապատկեր 1.2.7-ին, գծապատկեր 2.2.4-ին:

2. Ատենախոսությունում ներկայացված են աղյուսակներ, որոնք կազմվել են հեղինակի կողմից, սակայն չնշելով աղբյուրը կամ չկատարելով լիարժեք մեկնաբանություններ: Մասնավորապես, ատենախոսի հետազոտական առաջարկները առավել հիմնավոր կլինեին, եթե աղյուսակներ 2.1.1-ում, 2.1.2-ում և 2.1.3-ում թվական տվյալները ներկայացվեին կոնկրետ համալսարանների օրինակով: Աղյուսակ 2.2.2-ում ատենախոսը շրջանավարտների հետբուհական աշխատանքային եկամուտների հաշվարկը ներկայացնում է հինգ տարվա կտրվածքով, սակայն դրան զուգահեռ՝ չհիմնավորելով այդ ժամանակահատվածի իրատեսությունը:
3. Ատենախոսությունում մեկնաբանվում են նյութեր, որոնք բազմաթիվ անգամ վերլուծվել են հետազոտական աշխատանքներում, իրենցից նորույթ չեն ներկայացնում և ուղղակի ծանաբեռնում են շարադրանքը: Այսպես, պարագրաֆ 2.3-ում ներկայացված ակադեմիական կրեդիտների կուտակման կիսամյակային տարեկան հաշվարկային մասը կարելի էր տեղափոխել հավելվածներ և չներկայացնել ատենախոսության հիմնական տեքստում, քանի որ այն բազմիցս քննարկվել է Բոլոնիայի համաձայնագրին առնչվող կարգաբերող փաստաթղթերով:
4. Պարագրաֆ 3.1-ում ընդգրկված աղյուսակներ 3.1.1-ը և 3.1.2-ը ֆինանսական աուդիտի տեսանկյունից լրացուցիչ մեկնաբանությունների կարիք ունեն, քանի որ պարագրաֆը կոնկրետ վերաբերում է աուդիտի կազմակերպմանը բուհական համակարգում, և դրան առնչվող վերոնշյալ աղյուսակների տեղեկատվությունը պետք է սերտ առնչություն ունենար աուդիտորական եզրահանգումների հետ, տրամադրեր առավել հստակ պատկեր վերլուծվող բուհերի ֆինանսական վերահսկողության մակարդակի մասին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները բնավ չեն նսեմացնում հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Աստղիկ Պողոսյանի թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում դրված նպատակը և խնդիրների լուծումը կարևոր են ու արդիական:

Հետազոտության հիմնական արդյունքները հրատարակվել են հեղինակի գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսը դրսևորել է բարձր մասնագիտական գիտելիքներ և վերլուծական ընդունակություններ, ինչի մասին վկայում է ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները, իսկ մշակված առաջարկություններն ու կատարված եզրահանգումներն ունեն նաև տեսական և գործնական կիրառական նշանակություն:

Աստղիկ Գևորգի Պողոսյանի «Ֆինանսական վերհսկողության հիմնախնդիրները ՀՀ բուհերում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի «Գլաձոր» համալսարանի ընդհանուր
տնտեսագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր,
տնտեսագիտության դոկտոր

Պրոֆեսոր *Ս.Ս. Սուրբիսյանի*
ստորագրությունը հաստատում եմ՝
Երևանի «Գլաձոր» համալսարանի գիտական
քարտուղար
1.06.2022 թ.


Ս. Ս. Սուրբիսյան


Ռ. Գ. Այդինյան